

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Simsom-ն ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/76 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
2	հեմոդիալիզի սարքավորում	հեմոդիալիզի սարքավորում	հեմոդիալիզի սարքավորում	<p>Մեքենան պետք է ունենա ացեթատային, բիկարբոնատային, հաջորդական դիալիզի (մեկուսացված ուլտրաֆիլտրավորում) հնարավորություններ: Մեքենան պետք է լինի ծրագրային ապահովման թարմացման հնարավորությամբ և կապակցված հիվանդների տվյալների կառավարման համակարգի հետ: Արյան պոմպը պետք է աշխատի ոչ պակաս քան 15-ից մինչև 600 մլ/րոպե և համապատասխանեցված լինի ստանդարտ A -V արյան հոսքագծերին, ինչպես նաև աշխատի նույնիսկ ջրի կամ դիալիզային հոսքի բացակայության դեպքում: Մեքենան պետք է ունենա սովորական և բարձր հոսքային դիալիզի հնարավորություն, մանրէների զտիչ (պիրոգեն ֆիլտր)՝ մինչև ջրի հոսքը դեպի դիալիզատոր, ռեգերվային</p>

մարտկոց՝ էքստրակորպորալ արյան շրջանառությունը ժամանակավոր ապահովելու նպատակով, Na և ուլտրաֆիլտրավորման պրոֆիլավորում: Դիալիզատի ջերմաստիճաններն ընտրվեն 35-ից 39օՑ աստիճան տիրույթում: Փոփոխական հաղորդունակությունը ոչ պակաս քան 12.8 ից մինչև 15.7: Պետք է ունենա տարբեր դիալիզային հոսքերի հնարավորություն՝ ոչ պակաս, քան 300-ից 800 մլ / մթ, ինչպես նաև պետք է ունենա 100 մլ-ով ավելացնելու հնարավորություն կամ ավտոմատ հոսք: Հեպարինի պոմպը մինչև 50 մլ Ներարկիչի ծավալով, պոմպի հոսքի արագությունը 0.1-ից մինչև 10 մլ / ժամ (0.1 մլ քայլով): Ընտրելի UF արագություն՝ 0,00 լ/ժ մինչև առավելագույն արագություն: Ներքին կարգավորվող առավելագույն արագություն մինչև 1, 2, 3 կամ 4 լ/ժ: Հեղուկի մուտքի և ելքի միացումն առանձնացված է: Մոնիտորին բուժման բոլոր պարամետրերի և գրաֆիկական և թվային ձևով սցոլցադրում: Պետք է ունենա ինտեգրված ջերմային և քիմիական ախտահանման հնարավորություն՝ ինչպես կարճ, այնպես էլ երկար ախտահանման ծրագրով՝ օր/ գիշեր շաբաթային գրաֆիկով: Պետք է ունենա խառնիչ տեխնիկայի հաղորդունակության ճշգրիտ վերահսկողության հետադարձ կապի: Պետք է ունենա դրենաժային համակարգ: Պետք է ունենա ուլտրաֆիլտրավորման հոսքի ճշգրիտ վերահսկողություն՝ ծավալի հսկողության չափման տեխնիկայի կիրառմամբ: Լրացուցիչ հնարավորություններ, ինչպիսին է քլորենսի սառցանց մշտադիտարկումը (մոնիտորինգը): Ներկայացվող

կարևոր տվյալներ՝ մեքենան ցանկացած պահի օգտագործվի առանց տվյալների անընդմեջ մուտքի: Ավտոմատ ինքնաստուգման հնարավորության առկայություն: Ավտոմատ միացման/անջատման հնարավորության առկայություն: Պետք է ունենա մեծ, գունավոր TFT դիսպլեյ: Անսարքության ավտոմատ ախտորոշում՝ ընթացքում սխալներն առցանց հայտնաբերելու և ցուցադրելու հնարավորությամբ (տեխնիկական սպասարկման ռեժիմում): Մեքենան կարող է միացված լինել համակարգչին՝ տվյալների թարմացման համար և խնդիր առաջանալիս վերջինս վերացնելու նպատակով: Աուդիո-, տեսա- ազդանշաններ՝ հաղորդունակության հաճախականության խախտման, արյան արտահոսքի, օդային արտահոսքի, տրանսմեմբրանային ճնշման ազդանշաններ, դիալիզի ջերմաստիճանի ազդանշան, ախտահանման ավարտի ազդանշան, շրջանցման (bypass) ազդանշան և արյան պոմպի դադարեցման ազդանշան: Կրեատինինի կլիրենսի մշտադիտարկման կազմակերպում՝ ներկառուցված սարքի միջոցով էֆեկտիվ միզաթթվի կլիրենսի ու դիալիզի դոզայի (KT / V) չափման և մոնիտորինգի համար: Սնուցում՝ 220 ից 240 Վ / 50 Հց: Առաջարկվող սարքերը պետք է նախատեսված լինեն առնվազն հետևյալ որակավորում ունեցող՝ ISO 13485, CE Mark, Գրանցում ԵՏՄ-ի որևէ երկրում, կամ համարժեք երկու կամ ավելի պարագաների (դիալիզատոր /հիվանդի անհատական ֆիլտր/, արյան հոսքագծեր, ֆիստուլային ասեղներ և ռեակտիվներ) կիրառման համար: Մատակարարը

				<p>սարքի հետ միասին պետք է տրամադրի և տեղադրի սարքի մուտքային ջրի մաքրման ֆիլտրերը: Ստանդարտներ (փաստաթղթային վկայագրեր (վկայագրերի պատճեններ)). Արտադրողի վկայական ISO13485 կամ համարժեք Սարքի CE Mark (Directive 93/42/EEC) կամ համարժեք Սարքի տեղադրումը և թողարկումը արտոնագրված մասնագետով, ինչպես նաև ուսուցումը իրականացնում է մատակարարը: Սարքավորման համար երաշխիքային ժամկետ է սահմանվում առնվազն 365 օրացուցային օրը: Սարքը պետք է լինի եվրոպական կամ ամերիկյան արտադրության:</p>
--	--	--	--	--

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Simsom в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом LUFC-EUΔU72P-24/76 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
2				